ԺԱՄԱՆԱԿ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ
(պատմական (ան)արդարության[1] գաղափարի շուրջ)

ՆԱԻՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

> …Մարդկային փորձի ընդհանուր բնութագիրը, որը նշագծվում, հոդավորվում, պարզաբանվում է պատմության բոլոր ձևերում, նրա ժամանակային բնույթն է: Այն ամենը, ինչ պատմվում է, տեղի է ունենում ու ծավալվում ժամանակի մեջ, ինչ-որ ժամանակ է զբաղեցնում, և այն, ինչ ծավալվում է ժամանակի մեջ, հնարավոր է պատմել[2]:
>
> *Պոլ Ռիկյոր*

Եզրույթների, հասկացությունների ու հղացքների կազմավորումն ու մուտքն ակադեմիական աշխարհ գիտության ու փիլիսոփայության պատմության նշանակալի և ուշագրավ իրադարձություններից են: Գաղտնիք չէ, որ առանց նման նորամուծությունների գիտության ու փիլիսոփայության պատմությունը կլիներ անհնար: Ի՞նչ հանգամանքներ ու պայմաններ են թաքնված դրանց կազմավորման ու նորամուտի ետևում: Ի՞նչ տարրեր են հոդավորվում և ինչպե՞ս՝ սկիզբ դնելով մինչ այդ գոյություն չունեցող օբյեկտների: Այս հարցերի շարքին կարելի է ավելացնել նաև, թե ինչպիսի «ճակատագիր» է դրանց բաժին ընկնում: Արդյո՞ք հաջողվում է կայուն ու հիմնական տեղ զբաղեցնել կամ էլ բեկումներ առաջացնել ակադեմիական աշխարհում:

Յուրաքանչյուր դեպքի համար նման հարցերի լիարժեք պատասխանները կպահանջեին նյութի հետ մանրազնին ու համբերատար աշխատանք: Եվ ինչպես բոլոր նման դեպքերում, այդ աշխատանքն անխուսափելիորեն սահմանափակված-ուղղորդված կլիներ որդեգրված հեռանկարով: Այս առումով այն, ինչ այս հոդվածի շրջանակներում

---

[1] Մասնագիտական գրականության մեջ հավասարապես կիրառվում են թե՛ «պատմական արդարություն», թե՛ «պատմական անարդարություն» հասկացությունները: Ժամանակին Ջ. Ս. Միլը նկատել է, որ «…բարոյական շատ այլ հատկանիշների պես արդարությունը լավագույնս սահմանվում է իր հակադիրով…», (**Mill John-Stuart**, Utilitarianism, Oxford, 1999, p. 88): Նույն պնդումը տարածելի է նաև *պատմական* արդարության վրա: Այս հանգամանքով է պայմանավորված տեքստում ընտրված պատմական *(ան)արդարության* այս գրելաձևը, որը կոչված է ընդգծելու այս փոխկապվածությունը:

[2] **Рикер П.** Герменевтика. Этика. Политика, М., 1995, с. 60-61.

դառնալու է մտասևեռման առարկա, մի շարք բանավեճերի կիզակետում հայտնված պատմական (ան)արդարության (historical (in)justice) գաղափարն է, իսկ որդեգրված հեռանկարը բաղադրված է ֆրանսիացի մտածող Լ. Ալթյուսերի կառուցապաշտության որոշ կողմնորոշումներից: Առաջին հայացքից հետազոտության օբյեկտը՝ պատմական (ան)արդարության գաղափարը և մեթոդաբանական ելակետերը, գոնե մասամբ, բոլորովին տարբեր տրամասային դաշտերից կամ կազմավորումներից (discursive fields or formations) են: Առաջ անցնելով նկատենք, որ մինչ այժմ պատմական (ան)արդարության գաղափարին վերաբերող մտանդրադարձում գործադրված հիմնական միջոցները վերլուծական փիլիսոփայության զինանոցից են: Սա նշանակում է, որ այն քննելիս հիմնականում ապավինել են մտանդրադարձում կիրառվելիք ձևական մեթոդներին՝ վերպատմականության կողմնորոշմամբ: Այնինչ ապավինել Լ. Ալթյուսերի մեթոդաբանական մշակումներին ավելի շուտ նշանակում է վստահել մայրցամաքային փիլիսոփայության միջոցներին՝ իմաստի ու նշանակության փնտրտուքի մեջ իր պատմականության ու համատեքստայնության շեշտադրմամբ: Սակայն առաջին հայացքից հաշվի առնելով հետազոտության օբյեկտի ու մեթոդաբանության անզուգակցելի զանազանությունը, ինչպես նաև որդեգրված հեռանկարի «պարտադրած» անխուսափելի սահմանափակումները, տեղին է նշել, որ որդեգրված հեռանկարն իրեն հատուկ միջոցներով նոր լույսի ներքո է բացահայտում պատմական (ան)արդարության գաղափարը՝ երևան հանելով նրա համար առանցքային նշանակություն ունեցող հղացքներն ու հասկացությունները, դրանց հանգուցավորումներն ու հետևանքները:

Պատմական իրադարձություն և արդարություն

Ոչ միանշանակորեն ընդունված, ճակատագրի տեսանկյունից անորոշ պատմական (ան)արդարության գաղափարի շրջանառումն ակադեմիական աշխարհում հարաբերականորեն նոր է ու սակավադեպ: Դրա մասին «խոսելը» անմիջապես վեր է հանում փորձառությունների բազմազանություն և «զգայուն» հարցերի շուրջ անհամատեղելի մոտեցումներ: Որոշ դեպքերում պատմական (ան)արդարության գաղափարը դառնում է առանցք, որի շուրջ կառուցավորվում (constructed) են սոցիալական իրականություններ: Եվ այս վերջին հանգամանքն է գուցե, որ պետք է պատճառաբանի, թե ինչու է անհրաժեշտ որոշակի տեսանկյունից մտավոր անդրադարձի փորձ ձեռնարկել բուն պատմական (ան)արդարության գաղափարի նկատմամբ: Հետևաբար՝ միանգամայն պատճառաբանված է նախ հարց տալ, թե ե՞րբ և ինչպե՞ս է այն ձևավորվել, ի՞նչ են հասկանում մի կողմից *պատմական* (ան)արդարություն, մյուս կողմից՝ պատմական *(ան)արդարություն* ասելով:

Հայտնի իրողություն է, որ փիլիսոփայական մտքի պատմության ընթացքում առաջադրվել են արդարության տարբեր հղացքներ ու հայեցակարգեր: Հետևելով դրանց՝ կարելի է պնդել, որ արդարության շուրջ տեսաբանելու փորձերում կառուցավորվում ու քննարկվում են մեծ թվով սոցիալական երևույթներ՝ բարիքից մինչև պատասխանատվություն, առաքինությունից մինչև արժանիք և այլն: Իբրև գաղափար՝ այն «առաձգական» է, քանի որ «թույլատրում է» նորանոր երևույթների ու հասկացությունների «մուտքը», դրանց ինքնատիպ հոդավորումներն (articulations) ու իր միջոցով ներկայացված լինելը: Ընդ որում՝ այդ բովանդակային առաձգականությունն իրեն դրսևորում է հենց ժամանակային առումով՝ պատմականորեն ու հաջորդաբար երևան բերելով արդարության նորանոր ձևեր՝ սոցիալականից մինչև պատժիչ, փոխանակմանից մինչև վերականգնողական և այլն:

Ինչ վերաբերում է պատմական (ան)արդարության գաղափարին, ապա սա հարաբերականորեն նոր՝ 20-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված ու շրջանառության մեջ դրված հասկացություն է: Ակադեմիական միջավայրում դրա շուրջ քննարկումներ սկսել են ծավալվել 1980-ական թթ. և ակտիվացել հատկապես 1990-ական և 2000-ական թթ.՝ նաև «միջսերնդային արդարություն»[3] (intergenerational justice) կամ «արդարություն ժամանակի միջով» (justice over time) խորագրերի ներքո[4]: Եթե ելնենք պատմական (ան)արդարությանը նվիրված դեռ սակավադեպ հոդվածների բովանդակության մեջ արծարծվող խնդիրներից ու վկայակոչված փաստերից, ապա կարելի է եզրակացնել, որ պատմական (ան)արդարության գաղափարի ձևավորումն ու ակադեմիական աշխարհում լեգիտիմացումը նախ և առաջ փորձ էին մտավոր անդրադարձի ենթարկել սկզբում Երկրորդ աշխարհամարտին անմիջապես նախորդած և համատև դեպքերը: Հետագայում սրանց եկան միանալու նաև աֆրիկյան ու լատինամերիկյան մի շարք երկրների փորձառությունները[5]: Այս առումով պատմական (ան)արդարության գաղափարն ու դրա մասին խորհելու փորձերը ինչ-որ իմաստով ռետրոակտիվ են: Դրանք միտված են ներկայի մեջ անցյալում (երբեմն տասնամյակներ, երբեմն էլ դարեր առաջ) տեղի ունեցածն ըմբռնելի դարձնելու ու հնարավորության դեպքում ապագայում առաջ բերելու գործնական հետևանքներ: Այլ կերպ ասած՝ պատմական (ան)արդա-

---

[3] «Միջսերնդային արդարության» վերաբերյալ քննարկումներն այսօր էլ շարունակվում են, քանի որ այն լայն ընդգրկում ունի՝ էկոլոգիականից մինչև կենսաթոշակային ապահովում: Բանն այն է, որ, ի տարբերություն պատմական արդարության, այս գաղափարում ժամանակային վեկտորը ուղղված է ոչ միայն դեպի անցյալ, այլև ապագա (տե՛ս **Meyer H. Lukas**, «Intergenerational Justice», Stanford Encyclopedia of philosophy, http://stanford.library.usyd.edu.au/archives/spr2008/entries/justice-intergenerational/-այց՝ 28.04.2016):

[4] Այսպիսի ձևակերպման կարելի է հանդիպել հետևյալ գրքում՝ **Meyer Lukas**, Justice in time: Responding to Historical Injustice, Baden-Baden, 2004:

[5] Տե՛ս **Minow Martha**, Historical Justice, In: «A Companion to Contemporary Political Philosophy», ed R. Goodin, Ph. Pettit, Th. Pogge, Malden-Oxford, 2007, vol. II, էջ 621-923:

ության գաղափարի մտահղացումը հետահայացության տրամաբանության մեջ է: Անցյալի շատ իրադարձություններ սկսել են բնորոշվել իբրև պատմական անարդարություններ միայն post factum: Այսպիսով, պատմական անարդարության բացահայտումը և պատմական արդարության հաստատումը վերածվում են արդեն շրջանառության մեջ գտնվող ռետրոակտիվ արդարության[6]:

Ոչ միայն վերոնշյալը պարզորոշելու, այլև բուն պատմական (ան)արդարության գաղափարի մտահղացմանը մոտենալու նպատակով տեղին է մեջբերել Դանքըն Այվասոնի «պատմական անարդարություն» հասկացության սահմանումը: «Պատմական անարդարություն ասելով ես նկատի ունեմ անհատների, խմբերի, հաստատությունների կատարած չարիքները (harms) կամ անիրավությունները (wrongs) այլ անհատների, խմբերի հանդեպ, ովքեր այժմ մահացած են, բայց որոնց ժառանգներն այսօր ապրում են: «Ժառանգներ» ասելով՝ ես նկատի ունեմ ոչ միայն անհատներին, այլև անհատներից կազմված տարատեսակ խմբերին, ովքեր նույնանում են ժամանակի ընթացքում պահպանված (հաստատությունների ու պրակտիկաների մեջ առարկայացած) կոլեկտիվ ինքնության հետ»[7]:

Այս սահմանման մեջ նախ պետք է անդրադառնալ, թե ինչու հենց «*պատմական* (ան)արդարություն»: Ի՞նչ իմաստով է կիրառվում *«պատմական»*-ը: Վերջինս հղում է կոնկրետ թվագրելի ժամանակ(ահատվածում) տեղի ունեցածին, նրան, ինչը նաև պատմելի է[8], որովհետև տեղավորվում է ժամանակի մեջ: Այն իր բնույթով, սակայն, ըստ վերոհիշյալ սահմանման, միայն առաջին հայացքից է անցողիկ. անցողիկ է իբրև ինչ-որ պահի սկսված ու ավարտված, բնույթով եզակի, արդեն տեղի ունեցած դեպքերի շարք: Սակայն եթե ուշադրություն դարձնենք սահմանման երկրորդ մասին, ապա ակնհայտ է, որ անցողիկության հետ միասին այնտեղ ներկա է նաև կայունը՝ ապրող ժառանգների ու կոլեկտիվ ինքնության հետ նրանց նույնանալու շեշտադրման շնորհիվ: Բայց այս կայունը ոչ այնքան մշտականի, անփոփոխի, ի սկզբանե տրվածի իմաստով է, որքան ինչ-որ բեկումնային, արտասովոր համարվող դեպքի հետևանքով առաջ եկած անդառնալի փոփոխությունների, որոնք օբյեկտիվացած ու առարկայացած շարունակաբար վերարտադրվում են: Այս միտքն ավելի պարզորոշ դարձնելու համար

---

[6] Այս առնչությամբ կարելի է հիշատակել Իշտվան Ռևի աշխատությունը՝ **István Rév**, Retroactive Justice: Prehistory of Post-Communism, Stanford, 2005:

[7] **Ivison Duncan**, Historical Injustice, In: "Oxford Handbook of Political Theory", Oxford, 2006, p. 509.

[8] Պատմելի նշանակում է ոչ միայն, որ այն վերջապես բարձրաձայնվել է, որովհետև մինչ այդ դրա մասին խոսել հնարավոր չէր, օրինակ՝ պայմանավորված իշխանական հարաբերություններով, այլև, ինչպես Գրիգոր Պրյտեանն է ասում, «… կարողութիւնը միտքը կազմակերպելու, եղածը խորհելու, պատկերացնելու, իմաստի կամ նշանակութեան բերելու» (**Գրիգոր Պըլտեան**, Աղէտի Լեզուով, «Ազոս» շաբաթաթերթ, http://www.agos.com.tr/am/hvotvadzi/11394/aghedi-lyezuvov - այց՝ 24.04.2015):

անհրաժեշտ է վկայակոչել «պատմական իրադարձություն» հասկացությունը, ինչով նշանակվում են անցյալում տեղի ունեցած (այլ կերպ ասած՝ ժամանակի ու տարածության մեջ իրենց «տեղը գտած», ինչ-որ ձևով և ինչ-որ չափով իմաստավորված), շրջադարձային համարվող, արմատական փոփոխությունների հանգեցրած դեպքերն ու պատահարները: Ուիլյամ Սյուըլը համարում է, որ այն «…դեպքերի ճյուղավորված հաջորդականություն է, որը ժամանակակիցները ճանաչում են իբրև կարևոր, և որը հանգեցնում է կառույցների երկարատև փոխակերպմանը»[9]: Այս սահմանումը ուրվագծում է մի հեռանկար (խոսքը հատկապես կառույցների երկարատև փոխակերպման մասին է), որում պետք է հասկանալի լինի ոչ միայն պատմական (ան)արդարության գաղափարը, այլև՝ դրա առնչությամբ բարձրացվող մի շարք գործնական խնդիրներ[10]: Վերջինս նկատի ունենալով ու վերաձևակերպելով՝ անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել, որ պատմական (ան)արդարության» գաղափարի կարևոր բաղադրիչների թվին է պատկանում նաև այն պնդումը, որ պատմական իրադարձությունների ազդեցության հետագիծը նկատելի է մի քանի սերունդ շարունակ (օրինակ՝ ինքնության կառուցավորման, սոցիալական հաստատությունների ձևավորման մեջ): Հավանաբար նաև դրանք են իրենցով պայմանավորում սերունդների միջև ու ներսերնդային հարաբերությունների եթե ոչ ողջ պարագիծը, ապա հաստատապես այդ հարաբերությունների նշանակալի ու հիմնական մասը՝ կառույցներում ու հաստատություններում առարկայացած լինելու պատճառով:

Այսպիսով, եթե նախնական մի ամփոփում անելու լինենք, ապա ինչ-որ տեսանկյունից դիտված ու ըմբռնված սոցիալական հարաբերություններում առկա (ան)արդարությունը ենթադրում է *պատմական իրադարձությունների* առանցքայնություն: Ընդ որում, եթե հետևենք նույն հեղինակի՝ Դանքըն Այվասոնի տեքստի շարադրանքի տրամաբանությանը, ապա ստրկությունը, ցեղասպանությունը, սեփականությունից զանգվածային զրկումը, զանգվածային կալանքը, քաղաքացիների անխտրական սպանությունները, քաղաքական զանգվածային բռնաճնշումները պատմական անարդարություններ են[11]: Այսպիսի սահմանումը երևան է հանում «պատմական (ան)արդարություն» հասկացության մեջ ենթադրվող ինչպես ներհասարակական, այնպես էլ ազգամիջյան, միջէթնիկ, ռասայական հարաբերություններ: Այն բովանդակային առումով բավական լայն է, քանի որ ընդգրկում է լայնածավալ սոցիալական հարաբերություններ ու երևույթներ:

Սակայն պատմական (ան)արդարության գաղափարի ոչ պակաս

---

[9] **Sewell William H**., Jr., Logics of History: Social Theory and Social Transformation, Chicago, 2005, p. 288.

[10] Օրինակ՝ խոսքը կարող է վերաբերել պատմական անարդարության առաջ բերած հետևանքների փոխհատուցմանն ու դրա ձևերին:

[11] Տե՛ս **Ivison Duncan**, նշվ. աշխ., էջ 507-508:

ուշագրավ կողմերից է նաև վերոհիշյալ հեղինակի կողմից «չարիքներ» ու «անիրավություններ» բնութագրումների կիրառությունը, որով այդ դեպքերին հաղորդվում է մի կողմից բարոյական, մյուս կողմից՝ իրավական չափումներ: Այս բարոյաիրավական չափմանն անդրադառնալը կօգնի հասկանալու, թե ինչպիսի տրամասային դաշտում կամ կազմավորման մեջ է ձևավորվել պատմական (ան)արդարության գաղափարը, և հատկապես ինչպիսի գաղափարաբանական միտումներ են իրենց ազդեցությունը թողել: Սակայն առայժմ կարևոր է նախ բացահայտել, թե ընդհանրապես արդարության ինչպիսի հղացք է ընկած պատմական (ան)արդարության գաղափարի ու ի մասնավորի՝ վերոնշյալ սահմանման հիմքում:

Արդարության հղացումն ու դրա սահմանները

Պատմականորեն սկիզբ առած արդարության տարբեր հղացքների մեջ թերևս ամենահին հղացքն է պատմական (ան)արդարության գաղափարի ձևակերպման համար կարևոր դերակատարություն ունեցել: Ամենայն հավանականությամբ այդ հղացքի սկզբնավորումն ու նախնական ձևակերպումը պետք է վերագրել դիցաբանական աշխարհայացքին ու դրա տիրապետության ժամանակաշրջանին: Սակայն առաջին անգամ այն մասնակիորեն տեղ է գտնում Պլատոնի «Պետություն» աշխատության մեջ: Արդարության իր սեփական ըմբռնումը ներկայացնելու ու դրա ճշմարտացիությունը հիմնավորելու համար Պլատոնը քննարկում է արդարության մի քանի ըմբռնումներ և սկսում մի ըմբռնումից, համաձայն որի՝ արդարությունը պարտքը վերադարձնելն է[12]: Սակայն ավելի լայնիմաստ ու խորքային այս հղացքը բանաձևված է ***«արդարությունը յուրաքանչյուրին ըստ արժանվույն հատուցելն է»*** ձևակերպման մեջ: Դ. Միլլերի համոզմամբ՝ արդարության այս հղացքին կարելի է հանդիպել Հուստինիանոսի ինստիտուցիաներում, Ցիցերոնի ու Թ. Աքվինացու աշխատություններում[13]:

Նախ ակնհայտ է, որ արդարության այս հղացքը ժամանակայնություն ենթադրող է: Մի կողմից հատուցման՝ իբրև այդպիսինի մասին իմաստ ունի խոսել արդեն կատարված որևէ դեպքից, իրադարձությունից հետո, ինչը ենթադրաբար «իր տեղը գտել է»: Ընդ որում, եթե «հատուցում» ու «ըստ արժանվույն» հասկացությունները հասկանանք ավելի լայն՝ իբրև դրական ու բացասական երևույթները հավասարապես ներառող, ապա հատուցում են ոչ միայն պարտքի, կատարած աշխատանքի, այլև հանցագործության, լավության համար և այլն:

---

[12] Տե՛ս **Платон.** Государство. Избранное. М., 2006, էջ 44:

[13] Տե՛ս **Miller David**, Principles of Social Justice, Cambridge, 1999, էջ 33: Դ. Միլերը վկայակոչում է՝ The Institutes of Justinian, trans. J. B. Moyle, Oxford: Clarendon Press, 1937, էջ 3, տե՛ս նույն աշխատության էջ 283-ը:

Հետևաբար՝ արդարության այսպիսի հղացքի մեջ ուրվագծվում է անցյալի ու ներկայի միջև կարևոր տարբերակումը: Ներկան հատուցելու ժամանակն է, որը ենթադրում է նաև հատուցելու տեղանքը, քանի որ ներկան անցյալում պատահածի առարկայացումն է կամ առնվազն նրա հետքերի կրողը: Այսպիսով, «արդարության՝ իբրև յուրաքանչյուրին ըստ արժանվույն հատուցման» հղացքի մեջ անցյալի ու ներկայի միջև կապը սահմանադիր նշանակություն ունի. այն սոցիալական հարաբերությունների և արդարության սահմանադիրն է: Եթե վերհիշենք պատմական (ան)արդարության՝ վերը բերված սահմանումը, ապա ակնհայտ է հենց այս հղացքի հետ նրա ունեցած սերտ առնչությունը: Բայց քանի որ հատուցման բաղադրիչն էական դերակատարություն ունի արդարության այս ընդհանուր և ի մասնավորի պատմական (ան)արդարության գաղափարներում և ուղղակիորեն շաղկապված է վերականգնում-վերադարձի հետ, ապա ի՞նչ հնարավոր խնդիրներ ու հարցեր կարող են ծագել:

Ռետրոակտիվորեն միտված պատմական (ան)արդարության գաղափարի պարագայում, մասնավորապես, կարելի է հարց բարձրացնել, թե արդյոք սկզբունքորեն հնարավոր է վերականգնում-վերահաստատում: Ցանկալի՞ է արդյոք նման վերականգնում-վերահաստատումը, թե՞ ոչ: Այս առումով հայտնի է պատմական (ան)արդարություն հիմնահարցի շուրջ բանավեճերում «ոչ ինքնության փաստարկ»-ի (non-identity argument) կիրառումը: Պատմական (ան)արդարության հիմնահարցի համատեքստում այն վերաձևակերպվում է այսպես. պատմական անիրավությունները չեն վնասում կամ հազվադեպ են վնասում հետագա սերունդներին: Ավելին՝ նրանց իսկ գոյությունը պայմանավորված է անցյալի անիրավություններով, հետևաբար՝ նրանք ոչ թե չարիքներ ու վնասներ են կրել, այլ ճիշտ հակառակը՝ շահառուներ են[14]: Կամ ոչ՝ պակաս հայտնի է նաև Ջերեմի Ուոլդրոնի «փոխարինման դրույթը» (superseding thesis), որի համաձայն, օրինակ, հողի սեփականության նախկին իրավունքների վերականգնումը կարող է ժամանակի ընթացքում իրադրության փոփոխմամբ կորցնել իր դերն ու նշանակությունը զոհերի հետագա սերունդների համար[15]: Իհարկե պետք է նշել, որ այս երկուսն էլ ոչ պակաս քննադատության թիրախ են դարձել պատմական (ան)արդարության գաղափարի ու դրա գործադրման կողմնակիցների կողմից[16]:

---

[14] Այս տեսակետը պատկանում է Էնդրյու Քոհենին, տե՛ս **Cohen I. Andrew**, «Compensation for Historic Injustices: Completing the Boxill and Sher Argument» *Philosophy & Public Affairs*, 37(1): 81–102, 2009, էջ 81, ըստ՝ **Roberts A. Melinda**, «The Nonidentity Problem», Stanford Encyclopedia of Philosophy, http://plato.stanford.edu/entries/nonidentity-problem/#HisInj- այց՝ 28.04.2016:

[15] Տե՛ս **Waldron Jeremy**, Superseding Historic Injustice, Ethics, vol. 103, Chicago, 1992, էջ 4-28:

[16] Տե՛ս **Meyer H. Lukas**, Historical Injustice and the Right of Return, Theoretical Inquires in Law, 5.2 (2004), էջ 306-311, **Herstein J. Ori**, Historic Injustice, Group Membership and Harm to Individuals: Defending Claims for Historic Justice from the Non-Identity Problem, http://lsr.nellco.org/cgi/viewcontent.cgi?article=1042&context=columbia_pllt- այց՝ 28.04.2016:

Վերադառնալով արդարության՝ իբրև յուրաքանչյուրին ըստ արժանվույն հատուցելու հղացքի ժամանակային չափմանը, որն ընկած է պատմական (ան)արդարության գաղափարի հիմքում, կարելի է նկատել, որ վերջինում մի կողմից «(փոխ)հատուցում-վերականգնում-վերադարձ» կողմնորոշման առանցքն է՝ ձևակերպված նախարդիության պատմական-սոցիալական ժամանակի շրջապտույտի մոդելի շրջանակում: Մյուս կողմից՝ արդեն վերոհիշյալ պատմական իրադարձության՝ իբրև արմատական փոփոխություններ հարուցածի գաղափարը, այսինքն՝ արդիության պատմական-սոցիալական ժամանակի գծային մոդելի վկայությունը: Տեսական-փիլիսոփայական առումով այս երկու պատմական-սոցիալական ժամանակային տրամաբանությունները միմյանց ակնհայտորեն հակասում են: Ինչպես հայտնի է, շրջապտույտի մոդելում վերադարձը կրկնվելու իրականությունն է, որտեղ փոփոխությունները տրված ձևերի մեջ են, և նոր ձևեր չեն առաջանում: Ի տարբերություն դրա՝ գծայինը նոր ձևերի առաջացման ու անշրջելի փոփոխության հաստատումն է: Այս ներքին ժամանակային պարադոքսը, որի զգացողությունը ամենայն հավանականությամբ չի լքում պատմական (ան)արդարության գործադրման ընդդիմախոսներին, պարզվում է, միաժամանակ ներքին անհրաժեշտություն է: Պատմական (ան)արդարություն գաղափարում զարմանալիորեն անշրջելի փոփոխությունն ու շրջելի վերականգնումը անհրաժեշտորեն ենթադրում են միմյանց, քանի որ առանց պատմական իրադարձության բեկումնային նշանակության անիմաստ է խոսել վերականգնման-հատուցման մասին, և հակառակը՝ վերականգնում-հատուցումն իմաստավորված է միայն պատմական իրադարձության բեկումնայնության շնորհիվ: Սակայն այս տրամաբանությունների միջև հակասական, բայց միաժամանակ անհրաժեշտ կապը պատմական (ան)արդարության գաղափարը կարող է նորմատիվության տեսանկյունից տեղակայել ոչ միանշանակ իրադրության մեջ: Գաղտնիք չէ, որ բոլոր այն դեպքերին ու իրադրություններին, որոնք կարելի է պատմական (ան)արդարության գաղափարի տեսանկյունից իմաստավորել, կարող է հաջորդել պատմական արդարության իրագործումը: Սա հատկապես նկատելի է հատուցման ու փոխհատուցման խնդրի պարագայում, երբ հարց է առաջանում՝ արդյո՞ք անցյալի բոլոր չարիքներն ու անիրավությունները պետք է հատուցվեն՝ հաշվի առնելով բարոյական, նյութական, գործնական սահմանափակումները, գուցե և դրանք փոխհատուցելու կարևորության վերանալը: Թե՞ այնուամենայնիվ պետք է որոշել՝ որոնք են անհրաժեշտ հատուցել[17]: Ի՞նչպես որոշել դրանք, ինչի՞ հիման վրա, և ամենակարևորը՝ ո՞վ է որոշում: Սրանք ամենազգայուն ու խնդրահարույց հարցերն են, երբ խոսքը վերաբերում է տեսական բա-

[17] Տե՛ս **Ivison Duncan**, նշվ. աշխ., էջ 515-516:

նավեճերից գործնական քայլերին անցնելուն: Հենց այս հարցերն են, որ ստիպում են պատմական (ան)արդարության գաղափարին մեծ վերապահումով ու կասկածանքով վերաբերվել: Այսինքն՝ պատմական (ան)արդարության գաղափարը հայտնվում է իրավիճակային նորմատիվության տիրույթում, երբ դրա իրագործումը միշտ կախված է կոնկրետ հանգամանքներից:

Հակասություն-հակամարտությունը և մարդկային համակեցության սահմանները

Այսպիսով, պատմական (ան)արդարության գաղափարի համար ժամանակն իր բազմակողմ դրսևորումներով և դրա հետ սերտորեն փոխկապակցված իրադարձության հասկացություններն առանցքային դերակատարություն ունեն: Սակայն միայն դրանք բավարար չէին լինի կազմորոշելու և ասպարեզ բերելու պատմական (ան)արդարության գաղափարը: Վերջինիս վերը բերված սահմանումը հնարավորություն է ընձեռում շոշափելու ևս մի հասկացություն, առանց որի պատմական (ան)արդարության գաղափարի հղացումը չէր կայանա: Ընդ որում՝ դրա մասին պատմական (ան)արդարությանը նվիրված հոդվածներում տիրում է ոչ այնքան լռություն, որքան կիսալռություն, ակնարկ, ինչը կարծես կասեցնում է դրա վերաբերյալ հետագա քննարկումները: Ստրկության, ցեղասպանության, սեփականությունից զանգվածային զրկման, զանգվածային կալանքի, քաղաքացիների անխտրական սպանությունների, զանգվածային քաղաքական բռնաճնշումների՝ իբրև պատմական (ան)արդարության դեպքերի վկայակոչումը ցույց է տալիս, որ դրանց երևան գալը պետք է պայմանավորված լինի մարդկային համակեցության խորքային որևէ բնութագրով կամ գուցե բնութագրերով: Այդ խորքային բնութագիրն ի հայտ է գալիս հենց պատմական անարդարության վերոհիշյալ դրսևորումների միջոցով, թեև առաջին հայացքից դրանք միմյանցից տարբեր են: Այսպես, պատմական անարդարություն որակվող դեպքերի նույնիսկ մակերեսային քննությունը ցույց է տալիս, որ դրանք բոլորն էլ հղում են որոշակի հակասություններին[18]: Վերջիններս կարող են ունենալ ինչպես սոցիալ-քաղաքական, տնտեսական, այնպես էլ ռասայական, կրոնական ու էթնիկ հիմքեր և երբեմն դրանք այնքան են սրվում, որ տեղ-տեղ պատառոտում են ողջ սոցիալական հյուսվածքը[19]: Եթե առաջնորդվենք մարքսիզմի

[18] Օրինակ՝ լատինամերիկյան երկրների փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարացմանն ուղղված քայլերը հանգեցնում էին ռազմական դիկտատուրաների կողմից զանգվածային կալանքի, քաղաքացիների անխտրական սպանությունների ու զանգվածային քաղաքական բռնաճնշումների:

[19] Հայտնի են ցեղասպանություններից ու քաղաքական բռնաճնշումներից հետո հասարակության մեջ որևէ սերնդի ներկայացուցիչների նվազումն ու, օրինակ, ծնողազուրկ երեխաների թվի ավելացումը:

հետևորդների պատկերացմամբ, ապա նման դեպքերում հակասությունը վերածվում է հակամարտության[20]: Իսկ հետմարքսիստները կպնդեին, որ վերջինս ցանկացած հասարակությանն անհրաժեշտորեն բնորոշ չափում է[21]: Իհարկե, «հակասություն-հակամարտություն» չափման մուտքը պատմական (ան)արդարության գաղափարի տիրույթ ավելի շուտ սոցիալական հարթության մեջ է և մեղմում-շրջում է էթնիկ-ազգային ու ռասայական գործոնների դերը: Սակայն այսպիսի տեղակայումը նախ հնարավորություն է տալիս վերոհիշյալ պատմական անարդարության, հատկապես ցեղասպանության դեպքերը դիտարկել մի տեսանկյունից, որն ընդլայնում է դրանք ըմբռնելու հեռանկարը՝ ի ցույց դնելով դրանց ծագման նորանոր պատճառներ ու հետևանքներ: Բացի դրանից՝ այն հետագայում հնարավորություն կտա նաև կապ հաստատելու այն գաղափարաբանական ազդեցության հետ, որը կրել է պատմական (ան)արդարության գաղափարը և անգամ հիմնավորելու պատմական արդարության վերականգմանն ուղղված գործնական քայլերի տրամաբանությունը:

Իսկ առայժմ այս ամենի հիման վրա կարելի է մի կռահում անել. ամենայն հավանականությամբ 20-րդ դարի երկրորդ կեսի բազմաբնույթ շարժումները[22] (էթնիկական, ռասայական, սոցիալական, անգամ էկոլոգիական և այլն) դառնում են այն իրադրության կարևոր պայմանները, որոնք ընդլայնում են պատմական (ան)արդարության գաղափարի կիրառման սահմանները՝ մեկ անգամ ևս վկայելով, ինչպես Շ. Մուֆֆը և Է. Լակլաուն կասեին, ցանկացած հասարակությանը բնորոշ հակամարտային չափման անխուսափելիությունը: Իհարկե, «պատմական (ան)արդարություն» որակվող ցանկացած դեպքի առնչությամբ միայն կոնկրետ հետազոտությունները կարող են ամենայն խորությամբ ցույց տալ, թե դրանք ինչպիսի հակասություններ են և ինչու են այդպիսի հետևանքներ ծնել: Անհրաժեշտ է նկատել սակայն, որ եթե «ժամանակ» ու «իրադարձություն» հասկացություններն ավելի արտահայտված են պատմական (ան)արդարություն գաղափարում, ապա «հակասություն-հակամարտություն» հասկացությունը շատ ավելի միջնորդավորված է մուտք գործում նրա բովանդակության տիրույթ, ինչը, սակայն, ամենևին չի նշանակում, որ դրան անդրադառնալու կարիքը հրատապ ու կարևոր չէ: Վերոհիշյալ հետմարքսիստները կպնդեին, որ այդ հակասություն-հակամարտությունների գոյությունը ցույց է տալիս, որ մարդկային համակեցությունը (իրենք հիմնականում կիրառում են «սոցիալական ամբողջականություն» և «հասարակութ-

[20] Տե՛ս **Althusser Louis**, For Marx, http://cnqzu.com/library/Economics/marxian%20 economics/Althusser,%20Louis-For%20Marx.pdf, այց՝ 28.04.2016, էջ 215-216:

[21] Տե՛ս **Laclau Ernesto**, The Rhetorical Foundations of Society, London/New York, 2014, էջ 101-103, **Mouffe Chantal**, Agonistics: Thinking the World Agonistically, London/New York, 2013, էջ 1:

[22] Դրանք այս պահին էլ առկա են:

յուն» հասկացությունները) ներփակ չէ, և նրա սահմանները միշտ ինչ-որ իմաստով «վտանգված են» արմատական այլի (որևէ խմբի, նրա արժեքների) կողմից, քանի որ վերջինս կարծես մարտահրավեր է նետում գոյություն ունեցող կարգին[23]: Իրենց սահմանների այսպես կոչված «վտանգվածության» խնդիրը լուծելիս մարդկային տարբեր համակեցություններ տարբեր միջոցներ են գտնում: Ըստ էության, պատմական անարդարությունների դեպքերը որոշ դեպքերում այդ լուծումների հետևանքներն են:

Պատմական (ան)արդարություն գաղափարի կառուցավորումը և գաղափարաբանական ազդեցությունները

Այսպիսով, վերոշարադրյալում փորձեցի հիմնավորել պատմական (ան)արդարության գաղափարի համար ժամանակի, հակասության ու իրադարձության կանխադրման կարևորությունը: Եթե շատ ավելի մանրամասնելու ու հետևողականորեն տարբաղադրելու լինենք մնացած ոչ այնքան շեշտված կառուցումները, օրինակ՝ պատմական (ան)արդարության հիմքում ընկած արդարության հղացքը, ապա հաստատապես կարելի է շարունակել վերջինս հնարավոր դարձրած այլ հասկացությունների ու հղացքների թվարկումը: Սակայն, հաշվի առնելով նման ռազմավարության անընդմեջ կիրառման աննպատակահարմարությունը, հետայսու շարադրելիքն ավելի շուտ փորձ կլինի ուշադրություն դարձնելու դրանցից մի քանիսի վրա՝ իբրև պատմական (ան)արդարության գաղափարի ձևակերպման տրամասային դաշտի գաղափարաբանական միտվածության դրսևորումներ: Վերջինիս բացահայտման համար տեղին կլիներ ցույց տալ պատմական (ան)արդարության և արդարության մյուս ձևերի միջև կապը, որը պարզապես հաստատված չէ արդարությունն իբրև ընդհանուր բաղադրիչ ունենալու հանգամանքով: Նրանց միջև կապերը խորը բովանդակային են: Վկայակոչելով պատմական (ան)արդարության վերոշարադրյալ սահմանումը՝ ակնհայտ է դառնում, որ այն սերտորեն հանգուցված է մի կողմից պատժիչ արդարության գաղափարին, քանի որ իր սկզբնավորման ակունքներում պատմական արդարության գաղափարը ենթադրել է պատերազմական հանցագործությունների մեղավորների պատժում[24]: Վերջինիս լծորդված է նաև *շտկիչ-հատուցող արդարությունը*, քանի որ կոչված է ուղղելու պատմական անարդարությունների հետևանքները՝ իրագործելով այն հատուցման ու փոխհատուցման (այդ թվում՝ նաև նյութական) ճանապարհով, եթե ոչ ուղղակի չարիքի ու ա-

---

[23] Տե՛ս **Laclau E., Mouffe Ch**., Hegemony and Socialist Strategy: Towards a Radical Democratic Politics, London/New York, 2001, էջ 112-122:

[24] Պատմականորեն հայտնիներից է 1945-1946 թթ. Նյուրենբերգյան դատավարությունը: Տե՛ս նաև **Minow Martha**, նշվ. աշխ., էջ 621-923:

նիրավությունների զոհերին, ապա գոնե նրանց ժառանգներին: Մյուսից, սակայն, ոչ պակաս կարևոր է «*սոցիալական» կամ «բաշխիչ արդարություն»* գաղափարը: Ընդ որում՝ պատմական (ան)արդարության գաղափարի հետ սոցիալական արդարության գաղափարի սերտ հանգուցավորվածությունը միջնորդավորված է շտկիչ-հատուցող արդարությամբ: Ուշագրավ է, որ հենց այս վերջին հանգամանքն է ի ցույց հանում այն տրամասային դաշտն ու նրանում տիրապետող գաղափարաբանական միտումները, որոնցում ձևավորվել է պատմական (ան)արդարության գաղափարը: Դրա համար անհրաժեշտ է վկայակոչել սոցիալական արդարության այն ուսմունքը, որը ամենաուղղակի կապ է տեսնում սոցիալական արդարության ու շտկիչ-հատուցող արդարության միջև: Խոսքը 1974 թ.-ին Ռոբերտ Նոզիքի հրատարակած «Անարխիա, Պետություն և Ուտոպիա» աշխատության մեջ ազատապաշտական դիրքերից հղացած սոցիալական կամ բաշխիչ արդարության ուսմունքի մասին է: Ավելորդ չէ հիշատակել, որ նվազագույն պետության (minimal state) ջատագովությամբ հանդես եկող այս ուսմունքի համար առաջնայինը մարդու հիմնարար՝ կյանքի, մասնավոր սեփականության, ազատության իրավունքներն են, որոնք ոչ մի՝ անգամ համաձայնությամբ ստեղծված ընդհանուր իշխանություն (կառավարություն) չի կարող սահմանափակել: Ռ. Նոզիքը ձևակերպում է արդարության երեք սկզբունքներ, որոնք համահունչ են պետության այսպես կոչված «գիշերային պահակի» դեր ստանձնելու ազատապաշտության ոգուն.

- *Արդարության ձեռքբերման սկզբունքը (the principle of justice in acquisition),* որը վերաբերում է այն բանին, թե ինչպես են սկզբնապես մարդիկ տեր դառնում որոշակի իրերի, բարիքների,
- *Արդարության փոխանցման սկզբունքը (the principle of justice in transfer),* որը կարգավորում է, թե ինչպես են սկզբնապես ձեռք բերված իրերը մեկից անցնում մյուսին,
- *Արդարության շտկման սկզբունքը (the principle of rectification):*

Վերջինս, ըստ Ռ. Նոզիքի, կառավարում է ձեռքբերման ու փոխանցման մեջ եղած նախկին անարդարությունների շտկման միջոցները[25]: Այսինքն՝ անարդարություններր ծնունդ են առնում իրերի, բարիքների ձեռքբերման ու փոխանցման ժամանակ, որոնք ուղղվելու (նաև հատուցվելու) կարիք ունեն, եթե մարդկային համակեցության նպատակը արդարությունն իբրև իր ներքին կյանքի բնութագիր դարձնելն է: Իր տեսությունը և որդեգրած արդարության սկզբունքները Ռ. Նոզիքն անվանում է պատմական: «…Արդարության *պատմական սկզբունքները* հաստատում են, որ անցյալի հանգամանքները կամ մարդկանց գործողությունները կարող են իրերի հանդեպ առաջացնել տարբերակիչ իրավունքներ (entitlements) կամ արժանիքներ»[26],- գրում

[25] Տե՛ս **Nozick R**., Anarchy, State, and Utopia, Oxford, 1999, էջ 150-154:
[26] Նույն տեղում, էջ 155:

է Ռ. Նոզիքը: Բաշխիչ արդարությունը պետք է հաշվի առնի անցյալի հանգամանքներն ու անցյալում կատարված գործողությունները, որոնք շարունակում են ազդեցություն թողել ներկայի վրա: Սրանով Ռ. Նոզիքը վերահաստատում է ոչ միայն ազատապաշտության, այլև ազատականության գաղափարաբանություններում կենտրոնական տեղ զբաղեցնող մարդու որոշ հիմնարար իրավունքների և պետության՝ նաև իբրև բռնի ուժի լեգիտիմ կիրառողի իրավասության շրջանակի ճշտման կարևորությունը: Իհարկե՝ ազատապաշտությունը անհատականը ակնհայտորեն գերադրում է խմբայինից ու հասարակականից: Բայց եթե մեկ անգամ ևս անդրադառնանք պատմական անարդարության դեպքերի վկայակոչմանը, ապա դրանք զանգվածային դարձած հենց անհատական երևույթներ են, թեև կարող են կոլեկտիվ պատկանելության հիմք ունենալ, ինչպես և՛ ստրկության, և՛ ցեղասպանության դեպքերում է:

Այսպիսով, պատմական (ան)արդարության գաղափարը կառուցավորվում է արդարության մյուս ձևերի, տարբեր հղացքների ու հայեցակարգերի բաղադրիչների ինքնատիպ միահյուսմամբ: Այսպիսի միահյուսումը հաստատվում և ամրապնդվում է «մարդկային արժանապատվություն» բարոյական հասկացության կանխադրմամբ: Դրանով պատմական (ան)արդարության մեջ չարիքների ու անիրավությունների շեշտումը վկայակոչում է, որ խոսքը ոչ թե պարզապես մարդու խախտված իրավունքների մասին է, այլ մարդկային արժանապատվության ոտնահարման, ինչն առաջին հերթին բարոյական խնդիր է[27]:

Այսպիսով, ինչպես վերն արդեն նշվել է, ռետրոկատիվությամբ բնութագրվող պատմական (ան)արդարության գաղափարն իր խորքում ունենալով «արդարությունը յուրաքանչյուրին ըստ արժանվույն հատուցելն է» հղացքը՝ ժամանակի, իրադարձության ու հակասության հասկացությունների օգնությամբ յուրահատուկ կերպով հոդավորում է սոցիալական կամ բաշխիչ, շտկիչ-հատուցող ու պատժիչ արդարությունների բաղադրիչները: Դրանց հոդավորումը ծնունդ է տալիս սկզբունքորեն մի նոր օբյեկտի, որի երևան գալը հնարավոր է միայն մարդու արժանապատվությունը բացարձակացնող և դրանից բխող՝ մարդու հիմնարար իրավունքները կանխադրող ազատապաշտության ու ազատականության տիրապետող գաղափարաբանական ազդեցությունների հետևանքով:

Բանալի բառեր - *պատմական (ան)արդարություն, ժամանակ, իրադարձություն, հակասություն, արժանիք, հատուցում, ազատապաշտություն, բաշխիչ արդարություն, շտկում, ռետրոակտիվություն*

[27] 1948 թ. ՄԱԿ-ի ընդունած «Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման կոնվենցիան» և «Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիան» ամրագրում են մարդու իրավունքների ու արժանապատվության միջև կապը և դառնում պատմական (ան)արդարության գաղափարի կազմավորման հիմնաքարերը:

НАИРА МКРТЧЯН – ***Время, событие, противоречие: об идее “исторической (не)справедливости”***. – Концепт справедливости, согласно которому быть справедливым означает воздавать каждому по заслугам, лежит в основе ретроактивно ориентированной идеи исторической (не)справедливости. Элементы социальной, или дистрибутивной, исправляющей и карающей справедливости артикулируются таким образом, что конструируют идею исторической (не)справедливости с помощью времени, события и противоречий. В статье утверждается, что либертарианизм, в частности идея фундаментальных прав человека, играет решающую роль в формировании идеи исторической (не)справедливости.

Ключевые слова: *историческая (не)справедливость, время, событие, противоречие, должное, воздаяние, либертарианизм, дистрибутивная справедливость, исправление, ретроактивность*

NAIRA MKRTCHYAN – ***Time, Event, Contradiction: Some Reflections on the Idea of “Historical (In)justice”.*** – The concept of justice according to which “Justice means to give each his due” is at the foundations of the retroactively oriented idea of historical (in)justice. The elements of social or distributive justice and of retributive justice as well as of justice of rectification are articulated so that they construct the idea of historical (in)justice whereby the ideas of time, event and contradiction. The article states that libertarianism in general and the idea of fundamental rights, in particular, have a decisive role in the formation of the idea of historical (in)justice.

Key words: *Historical (in)justice, time, event, contradiction, due, requital, libertarianism, distributive justice, rectification, retroactivity*